ԱՄՓՈՓՈՒՄ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականին ստացել է շուրջ 652 դիմում-բողոք, գրություն, որոնցից շուրջ 288-ը՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին հաղորդում[1]:

Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնելու նպատակով հրավիրված և անցկացված նիստերի ընթացքում անցկացրել է ստացված դիմում-բողոքների, հաղորդումների ուսումնասիրությունների, հարուցված կարգապահական վարույթների և Հանձնաժողովի գործունեությանն առնչվող այլ հարցերի քննարկումներ: Կատարված ուսումնասիրությունների արդյունքներով շուրջ 264 հաղորդման հիման վրա կարգապահական վարույթ չհարուցելու վերաբերյալ սահմանված կարգով տեղեկացվել է հաղորդում ներկայացրած անձանց՝ պատասխանում նշելով կարգապահական վարույթ չհարուցելու հիմքերը:

2023 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից հարուցվել է 13 կարգապահական վարույթ (12-ով հարուցման առիթ է հանդիսացել անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց հաղորդումը, 1-ով՝ կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումը), որոնցից 8-ը կարճվել է, 4-ը դեռևս չի ավարտվել, իսկ 1-ով որոշում է կայացվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին: Հանձնաժողովի կողմից Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացված միջնորդությունը բավարարվել է և դատավորին հայտարարվել է նախազգուշացում: Հանձնաժողովի անդամների կողմից հատուկ կարծիքներ են ներկայացվել Հանձնաժողովի՝ կարգապահական վարույթ հարուցելու և կարգապահական վարույթը կարճելու մասին երկուական որոշումների վերաբերյալ:

[1] «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված՝ կարգապահական վարույթի գաղտնիությունն ապահովելու վարույթ հարուցող մարմնի պարտականությունից, ինչպես նաև կարգապահական վարույթի իրականացման՝ դատավորի և դատարանի անկախությունը հարգելու և հեղինակությունը բարձր պահելու սկզբունքներից ելնելով՝ Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հրապարակվում են միայն քանակական տվյալներ:

Դիմում-գրություններ ի ընդհանուր քանակը	Հաղորդումն երի ընդհանուր քանակը	Կարգապահ ական վարույթ չհարուցելու պատասխա ննների քանակը	Հարուցված կարգապահ ական վարույթների ընդհանուր քանակը	Կարճված կարգապահ ական վարույթների ընդհանուր քանակը	ԲԴԽ միջնորդությու ննների ընդհանուր քանակը	Ընթացքի մեջ գտնվող վարույթնե րի քանակը
652	288	264	13	8	1	4